

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

— Ի 23-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ Կոնսիստորիային Հայոց Վրաստանի ընդունել զՅովհաննէսն Շահվերտեան ի հոգևոր կոչումն ի ձեռնադրել զնա ի քահանայ Այգեհատ գեղջ գաւառին Բօրչալուայ։ Հ. 521.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ծանուցանել առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի՝ թէ ի կողմանէ Սինոդիս չէք արդել վարելոյ նմին ըստ հայեցողութեան իւրում, համեմատ 1171 յօդ. I. 6. XI հատ., ի գործ ձեռնադրութեան Խուցեան և Ալիխանեան սարկաւագաց ի քահանայ վասն ծխականաց հանդուցեալ Ղևոնդ աւագ քահանայի Խարազեան։ Հ. 522.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ համեմատ ցանկութեան ծխականաց Նոր—Նախիջևան քաղաքի և համաձայնութեան թեմական կոնսիստորիային Ն. Նախիջևա-

նի և Բեսարաբիոյ թոյլ տալ լուսաւորել զեկեղեցին յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչի էլէքտրական լուսաւորութեամբ ի հանդիսաւոր աւուրս և ի դէպս կարեաց, թողլով նաև զգործածութիւն մեղրամոմոց և կանթեղից։ Հ. 525.

— Ի 25-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել դանձապահի Սինոդիս տալ հետզհետէ Վարչութեան ձեռամարանի ռուբլիս չորս հազար ինն հարիւր վաթսուն և մի արտաքոյ նախահաշուոյ։ Հ. 529.

— Ի 27-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ հաստատել զԽորէն վարդապետն Լազարեան վանահայր վանուցն Գեղարդայ և զՎահրամ վարդապետն Սլկունի՝ վանահայր Մողնու վանուց Ս. Գէորգայ։ Հ. 534.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց նախ՝ արձակել զԻսրայէլ սարկաւագն Յովհաննիսեան ըստ խնդրոյ իւրոյ ի հոգևոր կոչմանէ, բառնալով զաստիճան սարկաւագութեան, երկրորդ՝ զառաջի արարեալ վկայական ձեռնադրութեան նորա եղծանել և պահել ի գործին և երրորդ՝ զվճռոյս տալ տեղեկութիւն կոնսիստորիային Ղարաբաղի, նահանգապետին Գանձակայ և գաւառական վարչութեան Էջմիածնի, ուստի ընկալեալ է Իսրայէլ սարկաւագն զմբշտական անցագիր, իբր միաբան Մ. Աթոռոյ։ Հ. 536.

— Ի 30-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ զծխատէր քահանայն Զէյվա գեղջ. գաւառին Էջմիածնի զՄկրտիչ Մարտիրոսեան դադարեցուցանել ի քահանայագործութենէ և առաքել յապաշխարութիւն եռամսեայ ժամանակաւ ի վանս Խոր-Վիրապի։ Հ. 541.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զյայտարարութիւն փոխ-թեմակալին Երևանայ ի 12-ն մարտի տարւոյս թ. 126 և 12-ն մայիսի, թ. 279, և զխնդրագիր Վահանայ քահանայի Մամիկոնեան ի 10-ն մայիսի տարւոյս՝ յանձն առնել միաբանի Մ. Աթոռոյ Տ. Լևոնի վարդապետի վերաքննել զգործ մեղադրանաց Վա-

հանայ քահանայի Մամիկոնեան և զարդիւնս քննութեան առաջի առնել Սինոդիս հանդերձ եղբակացութեամբ փոխթեմակալին։ Առ այս առաքել առ Տ. Լևոն վարդապետն զողջոյն գործն և պատուիրել կոնսիստորիային Երևանայ հոգալ զծախս բնակութեան և սննդեան քննչի յԵրևան քաղաքի, զորս ապա յաւարտել գործոյն պահանջել ի յանցաւոր կողմանէ։ Հ. 542։

— յ2-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել կոնսիստորիային Հայոց Վրաստանի սահմանել կենսաթոշակ ցմահ այրւոյ հանգուցեալ ատենադպրի կոնսիստորական Գրիգորի Բէկժանեանց Մարիամու ռուբլիս մի հարիւր ի տարին ի վիճակային արդեանց, սկսեալ յօ է սահման առն և նպաստ ուսանող որդւոյ նորա զերիս հարիւր ռուբլիս ի տարին յընթացս երկուց ամաց, սկսեալ ի 1-էն առաջիկայ սեպտեմբերի, զորս ունի նա յետս դարձուցանել յետ աւարտման ուսմանն յընթացս վեցից ամաց։ Առ այս առնուլ ի նմանէ զպատշաճաւորն ստորագրութիւն։ Հ. 547.

—67-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորիային Ղարաբաղի զգործ մեղադրանաց Ներսիսի քահանայի Տէր Յովսէփեանց Մեծ-Սոգութլու գեղջ, գաւառին Նուխւոյ, վասն կատարելոյ զպսակ անչափահասի՝ կարճել, զի ոչ հաստատին մեղադրանքն, այլ վասն ոչ յիւրում՝ ժամու արձանագրելոյ յեկեղեցական մատեանս զպսակս, զծնունդ և զթաղումն ծխականացն՝ զՆերսէս և զՄարգիս քահանայս Մեծ-Սոգիւթլու գեղջ արկանել ընդ տուգանաց, պահանջելով ի նոցանէ զքսանական ռուբլիս, ըստ 1442 յօդ. պատժ. օր. յօդուտ թեմական դպրանոցին Ղարաբաղի։ Հ. 563.

— 69-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորիային Ղարաբաղի զԽաչատուր քահանայն Տէր Եղիազարեանց Կուստպատ գեղջ վասն անփութութեան և տգիտութեանն դադարեցուցանել ի

քահանայագործութենէ միամսեայ ժամանակաւ ի զգուշութիւն յապագային, յանձնելով զհովուութիւն ժողովրդոց նորա յայլում՝ քահանայի. Հ. 567.

— Ի 11-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ քանզի աբարեալ քննութեամբն ոչ հաստատի ապօրինի կնապահութիւն ծխատէր քահանայի Նախիջեւանիկ գեղջ վիճակին Կարուց Մկրտչի Մանդակունւոյ, ուստի զգործս զայս կարճել. Հ. 577.

— Ի 28-ն յուլիսի Սինոդն հրամայեաց հաստատել զԲառնաբաս վարդապետն Մխիթարեան վանահայր վանուցն Հաղարծնի. Հ. 586,

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել կոնսիստորիային Նոր-Նախիջեւանի և Բեսարաբիոյ ծանուցանել Խանհակայ վարդապետի Տէր Միքայէլեան, եթէ ի կողմանէ Տ. Փոխարքային Կովկասու չիք այլ ևս արգել ինչ առ ի դարձ առնել նմա ի Մայր Աթոռ, ուստի և փութալ գալ այսր. Հ. 587.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց զԶաքարիա վարդապետն հաստատել վանահայր վանուցն Ծալէթու, զորմէ տալ գիտել նմա ի ձեռն կոնսիստորիային Ղարաբաղի. Հ. 588.

— 31-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ զիջեալ ի թախանձագին խնդիր հայ ժողովրդեան գիւղօրէից գաւառին Հին-Նախիջեւանի՝ թոյլ տալ առ այժմ Մատթէոս վարդապետի Ալոյեան մնալ ի Կարմիր վանս ի նոյն պաշտաման մինչ յառանձին տնօրէնութիւն Սինոդիս, իսկ զԵրեմիա վարդապետն կարգել ի միաբան վանուցն Հառիճոյ, առաջադրելով փոխանորդին վիճակին Աղեքսանդրապօլու կարգել զնա և ուսուցիչ ի դպրոցին Հառիճոյ, տնօրինելով զռոճիկ և զապրուստ նորին. Հ. 590.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ քանզի ոչ հաստատին ամբաստանութիւնք զԹովելեայ վարդապետէ

Թակաղեան, ուստի զգործս այս կարճել, զորմէ տալ տեղեկութիւն կոնսիստորիային Երեւանայ։ Հ. 594.

— Ի 1-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց զԵսայի վարդ. աչեռն առաքել ի վանս Տաթեւու ի միաբանակցութիւն: Հ. 597.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առնուլ ի յարգանս զպատճառաբանութիւնս և զմիջնորդութիւն փոխանորդին Ալէքսանդրապօլու, ներել զպարտս Արսէնի ա. քահ. Տէր Սիմէոնեան՝ զիջեալ յարգահատելի վիճակ նորա։ Հ. 598.

Ամուսնալուծութիւնք

— Ի 25 յունիսի Սինոդն հրամայեաց՝ ըստ յայտարարութեան կոնսիստորիային Աստրախանի կարճել զգործ ամուսնալուծութեան Նազարեան ամուսնոյ ի պատճառս մահու Մինասայ Նազարեան՝ առն Խնդրարկու Եղիսաբեթի Նազարեան։ Հ. 532.

— 32-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ քանզի Մարտէլեան ամուսինք՝ բնակիչք Հայ Աղուլում գեղջ շրջանին Կարուց, եկեալ ի հաշտութիւն և ի համաբնակութիւն՝ կեան ընդ միմեանս սիրով և խաղաղութեամբ, ուստի և կարճել զայս գործ։ Հ. 551.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ բնակչի հին-Նախիջեւան քաղաքի Կարապետի Սարգսեան մտանել յօրինաւոր ամուսնութիւն ընդ կենակցի իւրում Դաղազբիւլի Մկրտչեան։ Հ. 552.

— 37-ն յուլիսի Սինոդն հրամայեաց համեմատ եզրակացութեան կոնսիստորիային Նոր-Նախիջեւանի և Բեսարաբիոյ լուծանել զպսակ Աստուածատրոյ Գնակեանց, բնակչի Նոր-Նախիջեւանի, ընդ կնոջն Աննայի, թոյլ տալով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 556.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան կոնսիստորիային Հայոց Վրաստանի լուծանել զպսակ Տփխիսեցի Միքայէլի Ալիբէկեանց ընդ կնոջն Մարինայի և երկր-

ցունց ևս թոյլ տալ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլս։ Հ. 561.

—Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ քանզի ամուսինք Համամլու գեղջ գաւառին Ալէքսանդրապոլու Տէր Մինասեան Առքանազն և Մարիամն եկեալ ի հաշտութիւն՝ համաբնակին ընդ միմեանս, ուստի ըստ գրաւոր խնդրոյ նոցին կարճել ըզգործս որ վասն լուծման պսակի նոցա։ Հ. 562.

—Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան կոնսիստորիային Ղարաբաղի՝ լուծանել զպսակ բնակչի Շուշի քաղաքի, վերաբնակելոյն ի Բաքու Մարկոսի Զանբաբայեանց ընդ կնոջն Վարսենկան, առն և եթ թոյլ տալով մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. Հ. 564.

—39-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ լուծանել զպսակ բնակչի Վաղարշապատ գեղջ, վերաբն. ի Տփխիս քաղաքի Յովհաննիսի Եսայեան ընդ Աշխէնի Եսայեան, առն և եթ տալով իրաւունս նորոյ ամուսնութեան ընդ այլում։ Հ. 588.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ զիջեալ ի թախանձագին խնդիր բնակչի Շուլաւէր գեղջ, գաւառին Բօրչալուի Սարգսի Ղալէչեանց և ի բացառիկ հանգամանս, յորս ակնարկէ ի խնդրագրին, յապաւել զժամանակ ապաշխարութեան նորա ց20-ն առաջիկայ օգոստոսի, զորոյ զկնի թոյլ տալ նմա մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 560.

—Ի 28-ն յուլիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան կոնսիստորիային Երևանայ լուծանել զպսակ բնակչի Գեօղալդարա գեղջ, գաւառին Ալէքսանդրապոլու, Նազարէթի Պետրոսեան ընդ կնոջն Նատալիայ Յովսէփեան՝ թոյլ տալով առն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 581.

—Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Բեռաբերդոյ լուծանել զպսակ բնակչի Նոր-Նախիջևան քաղաքի Նիկողայոսի Նախշունեանց ընդ կնոջն Շուշանիկան, թոյլ տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 582.

—Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ քանզի գործք ամուսնալուծութեան օտարահպատակ Հայոց ոչ են դատելի ի ձեռն Սինոդիս, այլ ի ձեռն Կաթուղիկոսի ամենայն Հայոց, ուստի կարճել զգործ լուծման պսակի վերաբնակչի Կարս քաղաքի

տաճկահպատակ Իգնատիոսի Տէր Մարտիրոսեան Սասունցւոյ ընդ կնոջն Հայկանուշի Մահտեսի Կարապետեան։ Հ. 534.

— 8 31 յուլիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան կոնսիստորիային Երևանայ լուծանել զպսակ ընակչուհւոյ Երևան քաղաքի Փառանձեմայ Վարդանեան ընդ ուխտադրուժառն նորա Մովսիսի Ներսիսեան, կնոջն ևեթ տալով իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 573.